

IV. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

2014թ. ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ.-ին ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգ»-ին համապատասխան:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում գործող տեղային ցանցը միավորել է 205 համակարգիչ, որոնցից ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխանում են 50-ը կամ 24.4%-ը:

Տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով, 2014թ.-ին ՀՀ ԱՎԾ համապատասխան մասնագետներն այցելություններ են կատարել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներ, որտեղ մասնավորապես կատարվել են հետևյալ աշխատանքները. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալություններում արդիականացվել են ծրագրային փաթեթները, թարմացվել են հակավիրուսային ծրագրերը, կարգավորվել են տեղային ցանցերը և մոդեմային կապը՝ համապատասխան գործակալությունների տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների հետ:

Համակարգիչներում տարբեր ֆայլերի փոխանակում և աշխատակիցների միջև կապ հաստատելու նպատակով տեղակայվել է «Skype» ծրագիրը: Համակարգիչների վրա տեղակայվել են նաև ականջակալ-բարձրախոսներ (թվով 50 հատ)՝ տարածքների և կենտրոնի միջև կապ ապահովելու նպատակով:

Մշտապես կատարվել է ՀՀ ԱՎԾ ներքին «Intranet» կայքի սպասարկում և արդիականացում, ինչպես նաև շաբաթական պարբերականությամբ՝ www.armstat.am պաշտոնական կայքէջի արխիվացում:

Շարունակվել է վիճակագրական և վարչական տվյալների արխիվացումը: Համակարգչային սարքավորումների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով կատարվել են ստուգումներ, ախտորոշումներ և սարքավորումների վերանորոգում: Հոսանքի ընդհատումների ժամանակ համակարգիչների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով վերանորոգվել են անխափան սնուցման հոսանքի սարքեր (UPS):

ՀՀ ԱՎԾ ներքին համակարգչային ցանցն արդիականացվել է նոր սերվերով, որի վրա տեղակայված է Windows server 2008 համակարգը: Բոլոր համակարգիչները միացվել են գործող սերվերին, դրանք համապատասխանեցնելով տեխնիկական անհրաժեշտ պայմաններին: Արդիականացվել է նաև համակարգի հակավիրուսային ապահովման գործնթացը՝ տեղակայվել է նոր սերվեր հակավիրուսային ծրագրերի համապատասխան համալրմամբ:

2014թ.-ի ընթացքում ՀՀ ԱՎԾ-ում շահագործվել են թվով 53 տվյալների բազաներ, ինչպես նաև 25 տարբեր ոլորտների ծրագրատեխնոլոգիական համալիրներում կատարվել են 56 փոփոխություններ:

Վիճակագրական հաշվետվությունների ձևերի MS Word ձևաչափը փոխարինվել է MS Excel ձևաչափի (թվով՝ 42 նոր ֆայլ), ըստ որի արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և կապի, առևտրի և այլ ծառայությունների, միջազգային համադրումների, աշխատանքի, ֆինանսների, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի, մարդահամարի, ժողովրդագրության, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության ոլորտների ծրագրատեխնոլոգիական համալիրներում կատարվել են ծրագրային փոփոխություններ:

Շարունակվել են 2012թ. սեպտեմբերի 14-ից www.armstatbank.am կայքէջով հանրությանը հասանելի դարձած ArmStatBank տվյալների բազայի աղյուսակների ստեղծման և լրամշակման աշխատանքները՝ PX-Web ծրագրով, PC Axis ձևաչափով, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվություն սպառողի համար մատչելի MS Excel, xml կամ այլ ձևաչափերով: Այն հնարավորություն է ընձեռել ներբեռնել տվյալները աղյուսակային, գծապատկերային, հետագայում նաև՝ քարտեզային պատկերավորմամբ: Մինչև 2014թ. տարեվերջ կայքէջը համալրվել է ևս 35 վիճակագրական աղյուսակով (բազայով):

2014թ.-ին ներդրվել է FTP (File Transfer Protocol) սերվերը, որը հնարավորություն է ընձեռել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումների և իրենց տարածքային բաժինների միջև ֆայլերի փոխանակում իրականացնել առավել ապահով եղանակով: